600.0193.05.06.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունիսի 2019 թվականի №193Ա

քաղ. Երևան

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի 8-րդ կետի համաձայն՝ սույն թվականի փետրվարի 28-ից մինչև մարտի 6-ը «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացրած նոր միացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության հավաստիության ստուգման նպատակով Ընկերությունում իրականացվել է մոնիթորինգ, որի արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում չեն պահպանվել Հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95-Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 9.1-րդ, 10.4-րդ, 10.5-րդ կետի 2-րդ ենթակետի, 10.6-րդ կետի 1-ին ենթակետի, 10.8-րդ, 10.10-րդ կետի 1-ին ենթակետի, 10.16-րդ, 11.3-րդ կետերի, ինչպես նաև հանձնաժողովի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի №56Ա որոշմամբ հաստատված Ընկերության բնական գազի բաշխման №0109 լիցենզիայի պայմանների (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) 29-րդ կետի պահանջները, մասնավորապես.

1) Ընկերության կողմից ներկայացված նոր միացման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության մեջ չի ներառվել առանձնատների, 3 դեպքում՝ 100 խմ և ավելի ժամային սպառում ունեցող սպառողների, 2 դեպքում՝ նախկինում դիմած և հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ գազամատակարարման ցանցին չմիացված գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման վերաբերյալ տեղեկատվությունը,

2) դիմող անձանց գազամատակարարման ցանցին միացման պայմանագիր կամ տեխնիկական պայման, գազամատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացվել է հեռախոսային կապի միջոցով,

3) նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման նպատակով դիմող անձանցից գանձվել է միացման պայմանագրում ամրագրված վճարի 100 % -ը,

4) գազիֆիկացված բնակավայրերում դիմող անձի նոր գազասպառման համակարգի միացումը գազամատակարարման ցանցին իրականացվել է տեխնիկական պայմանների տրամադրմամբ,

5) Ընկերության պաշտոնական կայքում գազամատակարարման ցանցի ընդլայնմանն ուղղված նախահաշիվները հրապարակվել են մասնակի,

6) 9 դեպքերում չեն պահպանվել գազամատակարարման ցանցին միացման Կանոններով սահմանված ժամկետները,

7) 2 դեպքերում դիմող անձանց հետ կնքվել են միացման պայմանագրեր, որոնք չեն համապատասխանում Կանոնների №1 հավելվածով սահմանված օրինակելի ձևին.

բ) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը Հանձնաժողովը սույն թվականի մայիսի 6-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կանոնների 9.1-րդ, 10.4-րդ, 10.5-րդ կետի 2-րդ ենթակետի, 10.6-րդ կետի 1-ին ենթակետի, 10.8-րդ, 10.10-րդ կետի 1-ին ենթակետի, 10.16-րդ, 11.3-րդ կետերի և Լիցենզիայի պայմանների 29-րդ կետի պահանջների խախտման փաստի ուսումնասիրության նպատակով.

գ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից 2019 թվականի մայիսի 14-ի №05-34/2217 գրությամբ ներկայացվել են պարզաբանումներ, մասնավորապես.

1) Լիցենզիայի պայմանների 29-րդ կետի խախտման վերաբերյալ նշվել է, որ առանձնատների գազասպառման համակարգերը գազամատակարարման ցանցին միացման գործընթացը չի ներառվել նոր կառուցվող կամ վերակառուցվող գազասպառման համակարգի գազամատակարարման ցանցին միացման վերաբերյալ տեղեկատվության մեջ, քանի որ վերջինիս համար չի պահանջվել

գազամատակարարման ցանցի ընդլայնում և այդ գազասպառման համակարգերը կառուցվել են Կանոնների 10.3-րդ կետին համապատասխան: Մյուս դեպքերում խախտումները հանդիսացել են բացթողումների արդյունք,

2) Կանոնների 10.16-րդ կետի խախտման վերաբերյալ նշվել է, որ քանզի դիմող անձը չի բնակվում գազիֆիկացվող տարածքում (հասցեում) և վերջինս տեղեկացվել է հեռախոսակապի միջոցով, միացման պայմանագրի ստացման վերաբերյալ կատարվում է գրառում համապատասխան գրանցամատյանում,

3) Կանոնների 10.7-րդ կետի խախտման վերաբերյալ նշվել է, որ աշխատանքներն իրականացվել են Կանոնների 10.3-րդ գլխի՝ բնակչության և բազմաբնակարան շենքերում գտնվող կազմակերպությունների գազասպառման համակարգերի կառուցման դրույթներին համապատասխան, որի դեպքում դիմող անձանցից կատարվող նոր գազասպառման համակարգերի նախագծման, կառուցման և կարգաբերման աշխատանքների արժեքը գանձվում է ամբողջությամբ: Միևնույն ժամանակ, ելնելով միացվող գազասպառման համակարգի աշխատանքների ծավալներից, հաճախ հնարավոր է եղել կազմել կատարման ենթակա աշխատանքների ճշգրիտ լոկալ նախահաշիվներ՝ խոշարացված նախահաշիվների փոխարեն, որոնք ամբողջությամբ համապատասխանել են փաստացի կատարված աշխատանքների ծավալներին և դրանց ճշգրտման անհրաժեշտություն չի առաջացել, ինչպես նաև գազամատակարարման համար անհրաժեշտ աշխատանքների 100% վճարը կատարվել է դիմող անձի խնդրանքով և համաձայնությամբ,

4) Կանոնների 9.1-րդ, 10.5-րդ կետի 2-րդ ենթակետի, 10.6-րդ կետի 1-ին ենթակետի և 10.8-րդ կետի խախտումների վերաբերյալ նշվել է, որ նոր միացման տեխնիկական պայմաններ առանձին դեպքերում տրամադրվել են հաշվի առնելով Ընկերության և դիմող անձի փոխադարձ համաձայնությունը՝ անմիջապես գազատարների մոտ գտնվող հաշվառման հանգույցները սահմանազատման կետերում տեղադրելու վերաբերյալ՝ իրենց կողմից օբյեկտը սնող գազատարների կառուցման համար: Մեկ դեպքում դիմող անձի կողմից կրկնակի դիմումի համաձայն արդեն իսկ տրամադրված տեխնիկական պայմանները համարվել են անվավեր և տրամադրվել են նոր տեխնիկական պայմաններ: Որոշ դեպքերում տեխնիկական պայմանների տրամադրման համար ներկայացված դիմումները

համապատասխան հիմնավորումներով մերժվել են, և դիմող անձանց կողմից առկա խոչընդոտները վերացնելուց հետո, Ընկերության կողմից կատարված լրացուցիչ ուսումնասիրության արդյունքում, վերջիններիս տրամադրվել են տեխնիկական պայմաններ: Երեք դեպքում գազիֆիկացման համար միացման պայմանագիրը դիմող անձին ներկայացման փաստացի ամսաթվերը օպերատորը սխալ է գրանցել,

5) Կանոնների 10.10-րդ կետի 1-ին ենթակետի խախտման վերաբերյալ նշվել է, որ բնակչին նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման պայմանագրի կնքման առաջարկ չի ներկայացվել՝ բնակչի կողմից ներկայացված կենցաղային գազասարքավորումները օգտագործման համար պիտանի չլինելու պատճառով,

դ) Կանոնների 9.1-րդ կետի համաձայն՝ գազիֆիկացված բնակավայրերում դիմող անձի նոր գազասպառման համակարգի (բացառությամբ ավտոգազալիցքավորման ճնշակայանների և 100 խմ և ավելի ժամային սպառում ունեցող սպառողների գազասպառման համակարգերի) միացումը գազամատակարարման ցանցին իրականացնում է մատակարարը, իսկ միացման աշխատանքների իրականացման արդյունքում ստեղծված հիմնական միջոցները (գույքը) հանդիսանում են վերջինիս սեփականությունը,

ե) Կանոնների 10.4-րդ կետի համաձայն՝ մատակարարն իրավունք չունի դիմող անձից պահանջել ներկայացնելու տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն սույն կանոններով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով, միացման կամ մատակարարման պայմանագրերով,

զ) Կանոնների 10.5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մատակարարը դիմող անձին է ներկայացնում միացման պայմանագիր կնքելու առաջարկություն՝ վերջինիս ուղարկելով իր ստորագրությամբ միացման պայմանագիրը՝ երկու օրինակից՝ համաձայն Կանոնների N 1 հավելվածի,

է) Կանոնների 10.6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Կանոնների 10.1-րդ կետում նշված դիմումն ստանալու օրվանից մինչև միացման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 15

աշխատանքային օրը, եթե դիմող անձը բնակիչ կամ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է,

ը) Կանոնների 10.8-րդ կետի համաձայն՝ մատակարարը կարող է մերժել Կանոնների 10.1 կետում նշված դիմումը, եթե՝

1) դիմումը կամ դրան կցված փաստաթղթերը չեն համապատասխանում Կանոնների 10.2 և 10.3 կետերի պահանջներին,

2) դիմող անձի նոր գազասպառման համակարգի միացումը գազամատակարարման ցանցին հակասում է Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերին, շինարարական նորմերին ու կանոններին, խախտում է այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը,

թ) Կանոնների 10.10-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման պայմանագիրը և վճարի 80%-ի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը Կանոնների 10.7-րդ կետի համաձայն մատակարարին ներկայացման օրվանից մինչև դիմող անձին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 30 աշխատանքային օրը, եթե դիմող անձը բնակիչ կամ կենցաղային սպառում ունեցող կազմակերպություն է.

ժ) Կանոնների 10.16-րդ կետի համաձայն՝ Կանոնների 10-րդ գլխում նշված բոլոր ծանուցումները, առաջարկություններն ու համաձայնեցումները մատակարարն իրականացնում է գրավոր: Դրանք դիմող անձին կամ ճարտարապետահատակագծային առաջադրանք տվող իրավասու մարմին ներկայացնելու ծախսերը կրում է մատակարարը,

ժա) Կանոնների 11.3-րդ կետի համաձայն՝ մատակարարը պարտավոր է իր պաշտոնական կայքում և բաժանորդների սպասարկման կետերում հրապարակել Կանոնների 11.1-րդ կետում նշված աշխատանքների՝ գազամատակարարման ցանցի ընդլայնմանն ուղղված բոլոր նախահաշիվները և գազասպառման համակարգի կառուցման օրինակելի նախահաշիվները,

ժբ) Լիցենզիայի պայմանների 29-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար,

ժգ) հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 9.1-րդ, 10.4-րդ, 10.5-րդ կետի 2-րդ ենթակետի, 10.6-րդ կետի 1-ին ենթակետի, 10.8-րդ, 10.10-րդ կետի 1-ին ենթակետի, 10.16-րդ, 11.3-րդ կետերը և Լիցենզիայի պայմանների 29-րդ կետի պահանջները, ինչը ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների խախտմանը և խոչընդոտել է Հանձնաժողովի՝ կարգավորման գործառույթների պատշաճ իրականացմանը: Իսկ Ընկերության պարզաբանումները չեն կարող դիտվել որպես թույլ տրված խախտումների օբյեկտիվ պատճառներ և ազատել վերջինիս պատասխանատվությունից,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կանոնների 9.1-րդ, 10.4-րդ, 10.5-րդ կետի 2-րդ ենթակետի, 10.6-րդ կետի 1-ին ենթակետի, 10.8-րդ, 10.10-րդ կետի 1-ին ենթակետի, 10.16-րդ, 11.3-րդ կետերը և Լիցենզիայի պայմանների 29-րդ կետի պահանջները խախտելու համար Ընկերությանը տուգանել՝ 10 000 000 (տասը միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի չափով:
2. Ընկերությանը՝
   1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկշաբաթյա ժամկետում սույն որոշման 1-ին կետում նշված գումարը №900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան

5 հունիսի 2019թ.